



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19511
19512
19513
19514
19515
19516
19517

891 99
9-34


H.M. SETIAN
PAPETERIE ET ATELIER DE RELIURE
CONSTANTINOPLE
chakmakdjilar Yokouch



ՀԲՕՍԱՆԷ ԾՈՂՈՎԲԴԵԱՆ


ԿԱՄ

Վ Ի Ճ Ա Կ Ք




ԳՐԵՑ

ՔՐԻՍՏԱՆՈՅՇ



ՎԱՃԱՌԵԼԻ Ի ՆՊԱՍՏ

Ս. ՓՐԿԶԻ Ա.ԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ



ՏՊԱԳՐԵԱԼ ՀՐԱՄԱՆԱԻ ՄԷԱՐԻՑԻ


ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇՃԱՆ
ՍԻՒՄՊԻԼԼԻԻ ԽԱՆ ՎԱՐԻ ՅԱՐԿ 33

1884

ՔՐՈՍԱՆԲԵ ԵՈՂՈՎՐԳԵԱՆ

ԿԱՐ

Վ Ի Ճ Ա Կ Ք




ԳՐԵՑ

ՔՐՈՍԱՆՈՅՇ (ՏԻԻԵ ԲԻՆՆԻ ԿՐՈՅԱՑԻԱՆ)



ՎԱՃԱՌԵԼԻ Ի ՆՊԱՍՏ

Ս. ՓՐԿԶԻ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ



ՏՊԱԳՐԵԱԼ ՀՐԱՄԱՆԱԻ ՄԷԱՐԻՖԻ

Կ. ՊՕԼԿԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ

ՍԻՄՊԹԻԼԼԻԻ ԻԱՆ ՎԱՐԻ ՅԱՐԿ 35

1884



Գարունն էր . ծաղիկէլ էին դաշտք ու լերինք : Ըն-
 դարձակ՝ բայց առաւել բնութեան քան թէ արուեստին
 նուիրեալ պարտիզիս մէջ համախմբուած էին բնութեան
 ծաղիկներէն զատ՝ տղ հետ ծաղիւնք, երիտասարդք և
 երիտասարդուհիք , ոչ նուազ գեղեցիկ քան զառաջինս :
 Կային նաեւ հասակակից բարեկամներէս ոմանք՝ որ
 շատ ու շատ գարուններ տեսած էին և որք , կենաց
 ձմրան մէջ , կը ժպտէին սիրուն եղանակին՝ անցելոյն
 քաղցր յիշատակներով : Նստած հովանաւոր ծառոյ մը
 ներքեւ՝ կը խօսակցէինք մեր երիտասարդութեան յիշա-
 տակաց վրայ՝ ազատ ասպարէզ թողլով անմեղ զբօսա-
 նոց պատանեկութեան՝ այս հասակին՝ որ կը սիրէ հա-
 ճոյից և զբօսանաց վայելքն անքան բուռն և անյադ
 կերպիւ : Յանկարծ կանգ առին խողերն ու պարեր ,
 դադրեցան անոյշ երգերն և կանաչազարդ դալարեաց
 վրայ բոլորակ մը կազմեցին պարիչ ու երգիչ խումբերն :
 «Վիճակ , վիճակ հանենք» . սոս ձայներն հասան մեր
 ականջին : Ընկերացս փափաքին համաձայն՝ մեր քայ-
 լերն ու զգեցինք առ նոսա և նստանք դալարաւէտ նրս
 տարանի մը վրայ : «Տիկին , ըսաւ ինձ յայնժամ կոյս մը
 ծաղկափթիթ , խնդրեմ՝ զիճակ ըսէք մեզ , անա մտա-
 գրեցի» : Պատասխան տուի թէ օտար լեղուաւ վիճակ
 չ'էի գիտեր և պիտի նախընտրէի հայերէններն՝ եթէ
 երբէք ունենայինք : «Գուք շինեցէք մեզ անոնցմէ , ը-
 սաւ ինձ օրիորդն խարտիչադեղ . դուք շինեցէք , կըրկ-
 նեցին մի քանինսր , դուք՝ որ անքան կը սիրէք պա-
 տանեկութիւնը :» Ենչպէս մերձել այս սիրուն խմբին
 թախանձանքներն : Առի մատիտ մը ձեռքս՝ յօրինելու
 մի քանինսր , սոքա , ամէնքն ալ , յորդորներ և բա-

4598



588
40

բոյական խրատներ էին լուրջ ոճով և խիստ բարոյակա-
նով : Կարգացի զանոնք յաջորդաբար . . . : Ո՛վ սիրտ
մարդկային . . . : Զգացի թէ ջերմ ընդունելութիւն
մը չգտան, հաճոյքն ու զուարթութիւնը կարծես վանե-
ցին, և պատանի մը, հոգի աննենդ ու ազատասո՞-
հարցուց ինձ թէ կենաց անմեղ հաճոյքներուն հետ ան-
հա՞շտ պիտի մնար միշտ խիստ և աններող բարոյակա-
նըն : — Քիչ մ'աւելի զուարթ, քիչ մ'աւելի արտայոյզ
տաղեր գրեցէք մեզ, ըսին ինձ ոմանք . երգեցէք երի-
տասարդութիւնն ու գեղեցկութիւնը, յոյսն ու սէրը,
երկիւղն ու բաղձանքներ, երգեցէք սիրտն ու քիչ մ'ալ
իւր վշտերն, և այդ երգերուն հետ խառնեցէք առաքի-
նութեան և բայոյականի այդ յորդորներն, միրջապէս
երգեցէք մեզ կեանքը, ինչ որ կը կազմէ կեանքը : —
Ընդարձակ էր սահմանն՝ բայց ուղեցի համակերպիլ, ո՛ր-
քան որ հնար էր, դեռատի բարեկամացս այս բաղձան-
քին՝ որ էր նոյն ինքն ձայնն բնութեան : Կը մտածելով
որ մերձ էր Համբարձման և ԱՅճալի տօնն՝ փութացի ի
ղիւր առնուլ . համառօտիւ, հետեւեալ Վիճակներն՝ նուր-
բիւր զայնս Ազգային Հիւանդանոցի խեղճ պատասպարե-
լոց՝ որոց Վիճակն արժանի է ամեն զգայուն արտի կա-
րեկցութեան և օժանդակութեանն .

Ո՛վ որ կենաց գարնան ծաղկունքն քաղէք, վարդ՝
Կո՛ւսանք չքնաղ, երիտասարդք դուք զուարթ,
Եւ դո՛ւք աղնիւ Տեարք և Տիկնայք փափկանոյշ,
Ի ձեր վայելս, հեշտ զբօսանս ածէք յուշ՝
Այս գըթութեան յարկին ներքեւ ապաստան՝
Հիւանդն ու ծեր, աղքատն և որբ անպաշտպան :

20 Ապրիլ 1884
Քաղկեդոն

ՔՐԻՍՏԱՆՅԵ



၁ ၂ ၃ ၄ ၅ ၆ ၇ ၈ ၉ ၁၀ ၁၁

၁	၂	၃	၄	၅	၆	၇	၈	၉	၁၀	၁၁
၁၂	၁၃	၁၄	၁၅	၁၆	၁၇	၁၈	၁၉	၂၀	၂၁	၂၂
၂၃	၂၄	၂၅	၂၆	၂၇	၂၈	၂၉	၃၀	၃၁	၃၂	၃၃
၃၄	၃၅	၃၆	၃၇	၃၈	၃၉	၄၀	၄၁	၄၂	၄၃	၄၄
၄၅	၄၆	၄၇	၄၈	၄၉	၅၀	၅၁	၅၂	၅၃	၅၄	၅၅
၅၆	၅၇	၅၈	၅၉	၆၀	၆၁	၆၂	၆၃	၆၄	၆၅	၆၆
၆၇	၆၈	၆၉	၇၀	၇၁	၇၂	၇၃	၇၄	၇၅	၇၆	၇၇
၇၈	၇၉	၈၀	၈၁	၈၂	၈၃	၈၄	၈၅	၈၆	၈၇	၈၈
၈၉	၉၀	၉၁	၉၂	၉၃	၉၄	၉၅	၉၆	၉၇	၉၈	၉၉
၁၀၀	၁၀၁	၁၀၂	၁၀၃	၁၀၄	၁၀၅	၁၀၆	၁၀၇	၁၀၈	၁၀၉	၁၁၀
၁၁၁	၁၁၂	၁၁၃	၁၁၄	၁၁၅	၁၁၆	၁၁၇	၁၁၈	၁၁၉	၁၂၀	၁၂၁

1. - Թէ կոյս մի ես՝ սիրուն , անմեղ , նազելի ,
Թէ երիտասարդ՝ սուռյդ , զուարթ , փարելի ,
Կամ չափահաս , պատկառելի այր թէ կին՝
Գիտցիր որ քեզ բաղդ , լ՛ազազայդ կը ժպտին :

2. - Նըշոյլք արեւու , վրաս ծաղեցէք ,
Զեփու՛նք անուշիկ , դէմքիս փըչեցէք ,
Եւ դու , ո՛վ իմ սէր , ձեռքըդ տուր ինձ արդ՝
Որ կենաց ճամբան քալեմ ես զուարթ :

3. - Մի՛ արտնջեր , որդեակ , բաղդէդ , վիճակէդ՝
Միշտ աշխատէ , լիւր խնայող դու յաւէտ .
Օր մ՛ալ անշուշտ բաղդն յաջող քեզ ժրպտի՛
Բարի վարուցդ առնուս վարձքն արժանի :

4. - Թոչունն ի ծառս կը թառի ,
Սիրաքն ի սէր կը յարի .
Հողւոյս միակ բաղձանքն է՝
Գեղեցիկըն ու բարի :

5. - Կեանքն է կըրից հանդիստարան ,
Երանի՛ որ տէր ես կըրից ,
Դու հողւոյ վեհ խաղաղութեան
Ճաշակեա սուրբ վայելքն ամբիժ :

6. - Մութ են երկինք , քամին փըչէ ,
Դարձեալ սիրաքն կը հառաչէ ,
Ինչէր , ո՛վ սիրտ , դու կըրեցիր ,
Ա՛խ , ասոր ալ արդ դիմայիր :

7. — Եկ՛ւր, սրգեակ, բաղդըդ փորձէ,
Տես ապագայդ ի՞նչ պատրաստէ:
— Երջանկութիւն, հաճոյք քա՛նի,
Եւ զաւակներ քեզ արժանի:
8. — Արեւն ցանած իւր նըշոյլներ,
Գեղեցիկն է դէմըս կանոնի,
Քընքուչ էակն զերթ մի թողուն՝
Սրտիս մէջն է դլած իւր բոյն:
9. — Միրտդ է բարի,
Առաքինի,
Երջանկութեան
Ես արժանի:
10. — Միշտ ժըպիտ դէմք, դո՛ւ սիրտ, զուարթ դու ե՛րբ,
Զուարթութիւն կենաց դանձն է, լաւ զի՛ացիր,
Առ ի՞մներէն ջանա օգուտ դու քաղիլ,
Եւ բաղին յաջող կ'ուգայ ջանքերդ պըսակիլ:
11. — Կեանքըս վըշտաց չսրք մ'եղաւ,
Սրտէս արիւն հոսցաւ.
Ա՛հ, ներէ լնձ, Աստուած՝ իմ,
Ա՛լ դադրեցուր վիշտ ու ցաւ:
12. — Թողունն կ'երգէ յանտառին
Իւր անոյշ սէլն՝ խընդողին.
— Երգէ՛, ո՛վ սիրտ սիրահար,
Պիտի գըտնես մըխիթար:
13. — Զեփիւռ փըջէ արդ մեղմիկ՝
Ծաղկունք բուրեն անուշիկ.
Բողոքս մոռցած չ'է բնաւ զիս՝
Ա՛հա կ'ուզայ սիրելիս:

14. — Փութա՛ ընտրել քեզ ընկիր՝
Սիրտ մը բարի, անձնուէր.
Հարուստ, աղքատ անխտիր՝
Գանձ մ'է սիրտըն բարեկիր:
15. — Ճակատագրիս կը հետեւիմ՝ անտրտունջ,
Խեղդեմ սրտիս խուլ հառաչանքն ու մըմունջ՝
— Հաւատացէք, ո՛վ բարեկամք պատուական,
Կեանքն է մրցում, և պատերազմ միմիայն:
16. — Զմեռն անցաւ, եկաւ գարուն,
Ո՛հ, կարօտցայ իմ սիրելւոյն.
Մի՛, մի՛ թողուր, ո՛վ Աստուած իմ,
Որ չը տեսած զինքըն՝ մեռնիմ:
17. — Միրտ մը գտնեմ բարեգութ՝
Յայտնեմ ցաւերն սրտիս մութ,
Հո՛ն հանդէպնեմ գըլխիկըս՝
Սըրբեմ աչացս արտասուք:
18. — Հաղիւ ըզքեզ ձեռք ձըդեցի, պաշտելիս,
Եղեմական սուրբ Գրախտին մէջ կ'զգամ զիս.
Միակ բաղձանքս, միակ ուխտըս ա՛յս է, Տէ՛ր,
Սիրելւոյս հետ ապրիմ երկար տարիներ:
19. — Մի՛, մի՛ խաբուիք
Դուք ո՛վ մարդիկ,
Կեանքն է երազ
Խիստ վաղանցիկ:
20. — Գիշեր, ցորենի դու կ'երազես
Հարստութիւն դանձ անբաւ,
Բայց ոսկին ի՛նչ պիտի ընես,
Սրտիդ, մըտքիդ դանձեր Լն բաւ:

- 21. — Երկինք , երկիր , ա՛րեւ , լուսին՝
Վկայ եղիք իմ այս ուխտին .
Կ'ուխտեմ մընալ հաւատարիմ
Ես քու սիրոյդ մինչեւ չիբիմ :
- 22. — Հասակ նոճի , հուր աչքեր ,
Լուսնանըման դէմքդ սիրուն .
Հողւոյս մէջն է քո պատկեր ,
Թէ՛ քուն լինիմ , թէ՛ արթուն :
- 23. — Եկայ յաչխարհ վշտահար ,
Սուգ , ցաւ ու վիշտ անդադար .
Ի՞նչ էի , Է՛րնչ եղայ ես ,
Տէ՛ր , ապագաս յանձնեմ քեզ :
- 24. — Վարդի կոկոն նորաբաց՝
Սիրտըս մէջն է պարփակուած .
Ոչ ոք կարէ զայն բանալ՝
Բայց դու , ո՛վ իմ սիրեցեալ :
- 25. — Գարունն է , որդեա՛կ , եղանակ սիրոյ ,
Երգէ՛ դու ըզսէր , այն սուրբ սէրն գողտրիկ ,
Առաջին սարսուռն նորազարթ հողւոյ ,
Եւ ծաղիկ շըթանց ժըպիտն անուշիկ :
- 26. — Կ'ըսեն թէ գեղեցիկ ես՝
Քընքոյշ , կարմուռկ վարդի պէս .
Բայց ի՞նչ ընեմ քո փուշեր
Պատուն սիրտըս կարեվէր :
- 27. — Նորաբողբոջ ծաղիկ մատաղ՝
Շա՛տ կըրեցիր դու վիշտ , աւա՛ղ .
Վերցուր գլուխդ , ել ու կանգնէ ,
Գըթ ու թիւան շաղն Տէր քեզ ցօղէ :

- 28. — Հարեցաւ ձիւնըն , ծաղկեցան մարգեր ,
Ե՛կ , մնաք ձեռն ի ձեռն , երթանք դաշտ ու լեռ ,
Ո՛վ իմ պաշտելիս , միակ սէր հողւոյս՝
Փոթորիկն անցաւ , հաշտ են մեր սրտեր :
- 29. — Պարտէզներու տո՛ւնկ մատաղ ,
Սէրըդ վառեց զիս , աւա՛ղ .
Կը մեռնիմ երբ բաժնուիս ,
Այնքան սէրդ է վառած զիս :
- 30. — Այտե՛ր վարդագեղ , աչե՛ր սեւորակ ,
Դիւթիչ հրա՛պոյրներ՝ դարձեալ միտքս եկաք .
Անոյշ միշտակք սիրավառ սրտից՝
Ո՛սկի երազներ , զիս մի՛ մոռանայք :
- 31. — Ազնիւ ու վեհ կըրես ոգի ,
Եւ հաղուագիւտ ձիրքեր քա՛նի ,
Այլ բաղդն , աւա՛ղ , գիտես , կոյր է ,
Բարի սիրտըդ չը վարձատրէ :
- 32. — Առաքինութեամբ հոյլ ի հոյլ գերապանծ՝
Այլ շատերուն դու գըրգըռես ըզ նախանձ .
Առաքինին աշխարհիս մէջ վարձք չ'ունի .
Որդե՛ակ , քու վարձքդ պիտի գտնես ի յերկնի :
- 33. — Ահա գարունը եկաւ ,
Բոյս ու ծաղիկ բացուեցաւ .
Բացուէ և սիրտ իմ նըսեմ՝
Բաղըը քեզի մերձեցաւ :
- 34. — Խինդ պար ու խաղ
Դու ծնած ես ,
Զուարթ , խաղաղ՝
Շա՛տ անհող ես :

35. — Ծառոց պըտուղն շատ համով է ,
Այգուտն հիւթըն ըզմեղ վառէ •
Բայց քու սէրըդ , ո՛վ գեղեցիկ ,
Անոնցմէ շա՛տ է ազդեցիկ :
36. — Սոխակն ի վարդ երգէ ըզսէր ,
Ծաղկէ ծաղիկ թռչի թիթեռ •
Այսպէս քու կեանքդ , երիտա՛սարդ ,
Ըլլայ առոյգ , ուրախ , զուարթ :
37. — Քալէ՛ , որգե՛ակ , միշտ անխտոր՝
Ուղիղ ճամբան դու անմուր •
Զի ուղղութիւնն է մեծ հընարք ,
Յաջողութեան գաղանիք ու վառք :
38. — Հառաջանքներս նա չը՛ լըսիր ,
Արցունքներս նա չը՛ սըրբեր •
Մեկամաղձոտ սիրտ իմ բա՛ւ է ,
Գաղբէ՛ դու ալ հեծեծելէ :
39. — Հանդարտ ու հեղ
Գու մարդ մի ես •
Կեանքդ է զուարթ ,
Ե՛րանի քեզ :
40. — Ո՛վ հրեշտակ իմ սրշտելի ,
Կեանքըս ամբողջ քեզ տուի ,
Գերի լինիմ ես քու կամացդ՝
Լինիմ հաճոյ սիրուն աչացդ :
41. — Տիւ և գիշեր կը հառաչեմ քո սիրով
Եւ անտարբեր դու կաս մընաս , այ անգութ •
Պիտի մեռնիմ , և քարէղեն այդ սրտով՝
Կաթիլ մ՛արտօսը գերեզմանիս չը տաս մութ :

42. — Կ՛ուզե՞ս զիմնայ , ո՛վ պատանի՝
Թէ բազդն քեզ լե՞նչ պահած ունի •
— Քիչ մ՛արտատուք , շատ մը յոյսեր
Եւ մի սիրուն կենաց ընկեր :
43. — Ուխտէ ապրիլ
Պարկեշտօրէն ,
Ոիրել , սիրուիլ
Քո կենակցէն •
Եւ թշուառաց՝
Զանա դու միշտ
Ըստ քո կարեաց
Ըսփոխել վիշտ :
44. — Մա՛յր իմ , մի՛ լար որդւոյդ վըրայ քո պանդուխտ ,
Սըրբէ՛ աչերըդ , պիտի՛ լըցուի՝ որբաիդ ուխտ •
— Ո՛հ , չէ՛ , յաշխարհ չը կայ բան մը անուշակ ,
Որքան սիրոյդ , գորովանացդ է ճաշակ :
45. — Տեսայ ըզնա , ո՛վ Աստուած ,
Զեռքըն վարդ մը նորաբաց •
Ո՛հ , անոր հետ բազդատմամբ՝
Վարդն ինձ արգել կրեաց :
46. — Ո՛վ բախտ , ըսի , ի՞նչու մոռցար զիս այսպէս ,
Փառք ու պատիւ , ոսկի , արծաթ կուզեմ ես •
— Օ՛հօ՛ , դոչեց բազդըն անսիրտ ու խընդաց ,
Մի՛ զհետ պնդիր , ո՛վ մահացու , պատրանաց :
47. — Առ աւօտ մ՛էր , իջայ պարտէզ՝
Քաղիկ ըզվարդ , յաստիկ , նարգէս ,
Փունջ մի կապել ձեռօք սիրոյս՝
Զայն նուիրել իմ սիրելոյս :
48. — Ո՛վ սիրելիս՝
Հատար սըրախս ,
Քեզ նուիրեմ՝
Կեանքս ու հոգիս :

49. — Ո՞ւտի եկայ և ո՞ւր կերթամ,
Առ ի՞նչ ծնունդ և գերեզման.
Հա՞րկ է մեռնիլ, ո՞վ իմ Աստուած՝
Կենաց գաղտնիքն չը թափանցած :
50. — Զիւնը կուգայ յուշիկ , յուշիկ ,
Նըռան նըման է իւր թուշիկ .
Ի՛նձ երանի՛ թէ վարդ այտէդ՝
Համբոյր մը տաս ինձ անուշիկ :
51. — Երբ ես մեռնիմ, եկէ՛ք , սիրո՛ւն ընկերնէր,
Գերեզմանիս վրայ թափել ծաղիկնէր.
Կտօ՞րի մ'արտօսը յիշատակիս կը բաւէ ,
Մըմունջ մ'աղօթք հոգւոյս համար, ո՛հ, շա՛տ է :
52. — Սէքն է ծաղիկ , օրէնք բնութեան կենարար .
Սէր կ'երազես , ո՞վ դու հոգի խանդավառ.
Բայց մի՛ տարփանքն . մի՛ խնդրեր լոկ նիւթական՝
Այլ սէր հոգւոյ ամբիժ ու սուրբ , իտէական :
53. — շուր , հուր աչքեր՝
Վառ , վառ այտեր ր
Գե՛րի կընէք
Զեղ շատ սըրտեր :
54. — Փողոցները կը շըրջիս՝
Աչքերդ չորս դին սեւեռած՝
Ի՛նչ ո՞ւր այդպէս դու նազիս,
Ոչ ոք քեզի է հաւնած :
55. — Պչնուլ ի գեղդ , դու աչիրուդ նահատակ՝
Է իմ միայն ըստփանք .
Ունել ըզքեզ բաղկացս մէջ մի վայրկեան՝
Լրումն է ինձ երջանկութեան :

56. — Դու խեղճ որբ մ'ես , ո՛հ , մի՛ լար ,
Յոյսդ դիր յԱստուած բարերար .
Ոչինչ յուսա օտարէն ,
Դու քեզ օգնէ , կ'օգնէ էն :
57. Թօնքերդ՝ աղեղ և աչքդ՝ նետ՝ ձըգնի ի քեզ , ո՞վ օրիորդ,
Որսեր՝ սիրոյդ երկրպագու , ո՞վ դու սըրտից քաջ որսորդ :
Փութա մինչ դէմքդ նորածաղիկ կարէ խանդ , սէր արծարծել
Հարուստ , աղքատ՝ քեզ կենակից ազնիւ բարի սիրտ մ'ընտրել՝
— Մի՛ յապաղեր , ո՞վ օրիորդ , չ'ըլլաս պառաւ ու գեղաթափ .
Ծառ անպտուղ՝ և բընութեան սուրբ օրինաց դու ապստամբ .
Եւ մի՛ երբէք , ո՞վ հայունի , համեստութեան դու շուշան ,
Մի կեանս վարեր դու անպարկեշտ ամբիժ անուանդ սնարժան :
58. — Եկո՛ւր օրդեակ , ե՛կ սա վիճակն դու բունէ ,
Սիրտըդ յուսով , փափաքներով , ո՛հ , լի է .
Այդ փափաքներն պիտի լըցուին , դու գիտցիր ,
Միայն ուղիդ , բարի ճամբէն ընթացիր :
59. — Երկինք անհուն ,
Աստղեր անթիւ՝
Երջանկութիւն ,
Գիշեր և տիւ ,
Քեզ խոստանան
Փառք , յոյս անձիր ,
Բաստ աննըման .
: — Մի՛ վըհատիր :
60. — Զեփիւռն՝ ծաղկանց հովահար՝
Սոխակն՝ վարդին սիրահար ,
Ա՛հ , մինչեւ ե՞րբ կեանքս տըխուր
Զուրկ ի սիրոյ՝ մնայ թափուր :
61. — Առաքինի է սա կուսիկ ,
Թէև աղքատ , բայց ճոխ — սրտիկ .
— Ինչո՞ւ այսպէս , ո՞վ իմ Աստուած ,
Աղքատին սիրտն է անարդուած :

62. — Սեւ, սեւ ամոլեր
 Են արդ զիզուեր
 Գլխուս վերեւ .
 -Բայց դո՛ւ, ո՛վ Տէ՛ր,
 Հանէ՛ հողմեր,
 Տո՛ւր մեզ անձրեւ .
 Եւ պիտ' ցրուին
 Այդ ահագին
 Ամպոց կուտակ .
 Պայծառ երկին,
 Արեւ բացուին
 Հողւոյս յատակ :

63. — Ծառըն կուտայ պըտուզ անոյշ,
 Հաւըն ձագեր հանէ քընքոյշ .
 Մարդն՝ ըստ բնութեան՝ առաքինի՝
 Բարի սերունդ թողու յերկրի :

64. — Լըռէ՛, սի՛րտ իմ, ո՛հ, ալ հերիք բաբախես,
 Զերթ թռչնոյն թեւ կը թըռթըռաս դու կարծես,
 Թը՛սիր, ո՛վ սիրտ, դէպ յառարկան ցանկալի .
 Հանգչէ՛ դու հոն յոսկի երազս հեշտալի :

65. — Կրակն ունի իւր աճիւն,
 Սոխակն ունի քնքոյշ բոյն .
 Իս խեղճ գլխիկս դընկու
 Զ'ունիմ բարձ մը փափկազոյն :

66. — Ժըրաջան մեղու
 Կը նըմանիս դու .
 Ու մեզը շըրթունքէդ
 Կը հոսէ յաւէտ .
 Այլ մերթ, մեղուին պէս՝
 Ուժգին, ո՛հ, խայթես :

67. — Գիշերները քուն չ'ունիմ՝
 Միշտ ես 'ի քեզ կը խորհիմ .
 Ո՛վ խորհուրդներ, ո՛վ անուրջք՝
 Ոյց միայն բարձըս՝ մըտերիմ :

68. — Մարդուս կեանքըն, ա՛հ . չ'ա՛տ կարճ է,
 Փութա, ո՛վ մարդ, բարիք գործէ .
 Ազնիւ գործեր դու հանրո դուս,
 Անմահութիւն քեզ պատրաստէ :

69. — Անհանդիստ եմ, ա՛հ, չը գիտեմ, ի՞նչ ունիմ,
 Հո՞ւր թէ բո՞ց է որ կը վառի յիմ արտին .
 Աշխարհն՝ ինձ մութ, չ'առնում բանէ մ' ես ճաշակ .
 Ո՛վ խաչ, ոտքըդ թափեմ արտօսը, հառաչանք :

70. — Ըսաւ օր մ' ինձ մի պատանեակ
 Կորսուած է այն ժամանակ՝
 Զոր կանցնեմք առանց սիրոյ՝
 Ո՛վ օրիորդ, սէր իմ հողւոյ:
 - Ըսի . ո՛վ դու հուր պատանեակ,
 Կորսուած է այն ժամանակ՝
 Զոր կանցնեմք առանց բարեաց՝
 Ի գութ, ի սէր հէք թշուառայ :

71. — Ես անխորհուրդ ճամբայ ելայ՝
 Առանց հաշուի ամուսնացայ .
 Փնօք քեզ, Աստուած, օգնական իմ,
 Լաւագունին պատահեցայ :

72. — Բիւր ձիրքերով պըճնուած՝
 Համեստ շուշան դու դաշտաց .
 Երանի՛ ում քու սիրոյդ
 Արժան լինի, ո՛վ Աստուած

73. — Կարմիր վարդի դու կոկոն,
 Ըզքեզ գըտնեմ, ո՛հ, ես հոն,
 Սըրտիս վըրայ քեզ սեղմած՝
 Այնպէս հողիս տամ յԱստուած :

74. — Այժըն ունի քընքուշ ուլ,
 Բոյն ու ձագեր՝ քաջ պըլպուլ .
 Միայն մարդոյն ամուրի
 ' Կեանքն անպըտուզ է, ամուլ :

75.- Երկինք կապոյտ՝
Տիպար հողւոյդ՝
Գութ ունեցիր
Հէք սիրելւոյդ :
Լոյս բոցակէզ՝
Աչքերըդ հեզ .
Ըզքեզ, վախճամ,
Կ'առնուն ձեռքէս :

76.- Մեղուք ծաղիկ կը ծրծեն՝
Տատրակք զիրար համբուրեն .
Ո՛հ, սըրտիկս խղճալի
Զուրկ է սիրոյ վայելքէն

77.- Աղու աչքեր, գիտակ ոսկի,
Եւ վարդագոյն այտեր ունի .
Ո՞վ չը հաւնիր այդ գեղեցկին,
Երանի ում լինի տիկին :

78.- Կեանքըն փըշոտ մի ուղի է զառիվեր .
Ճամբորդ, ըզգո՛յշ, ըզքեզ խայթեն շատ փուշեր .
Մի՛ վըհատիր . ել ու քայլէ դու ուղիդ,
Ճամբուղ վըրայ պիտի գտնես շատ վարդեր,

79.- Դու գեղեցիկ
Ես մի թըռչնիկ,
Բայց զիս տանջես,
Չար անուշիկ :

80.- Միշտ աշխատէ,
Բարին գործէ .
Արի եղիր .
Մի՛ վըհատիր .
-Ձի փոյթ . կարդ, ջանք
Տան բազդ ու կեանք :

81.- Այգըն մարգարիտ ծաղկանց կը բաժնէ,
Արեւն լեռներուն ոսկի կը ցանէ,
Բայց իմ պաշտելի սիրոյս առարկան՝
Քան զայգն ու արեւ, ո՛հ, զիս կը դիւթէ :

82.- Դու կ'երկմբտիս թէ ըզքեզ
Եր սիրե՛մ իմ հողւոյս պէս .
Ս՛հ, կը մեռնիմ ես, ա՛նգութ,
Եւ դու բընաւ չ'ընես փոյթ :

83.- Հա՛րուտ լինիմ, ու վա՛յելեմ, կ'ըսես դու,
Բիւր իղձ, փափաք ըզքեզ վառես, մահա՛ցու .
Այլ ճշմարիտ գանձ են վայելք բընութեան՝
Որ թէ՛ ճոխին, թէ՛ աղքատին ի սպաս կան :

84.- Դու ի շարքս անդ գեղուհեաց գեղանի,
Ամենուն մէջ փայլիս իբրեւ թագուհի,
Հրապոյր դիւթանք և հեշտութիւն աննըկար
Ազգես սըրտից մեր ու հողւոց ընդ երկար :

588
40

85.- Հասակդ՝ երկայն,
Վերմակդ է կարճ .
Խելքդ է երկայն՝
Բաղդըդ՝ կարճ :

86.- Նայէ՛ ծառոց հովանւոյն՝
Ուր ուղեւորք կը հանգչին .
Այսպէս ի գիրկս սիրելւոյն
Հանգչի սիրտըն, հողք թուչին :

87.- Վըտա՛կ, հոսէ արխրագին՝
Նըման աչացս արտասուքին .
Ուշ գտայ, շուտ կորուսի,
Լաց ի վերայ իմ բախտին :

88. — Աշնան տերեւներ՝ տըխուր դալկահար՝
 Գամին կը փըչէ, կը թափէք դուք վար .
 Ո՛վ երազք ու գեղ պատանեկութեան՝
 Այսպէս դուք թըռա՛ք ինձմէ յաւիտեան :
89. — Ըրէ՛ կենացդ զիս ընկեր ,
 Լինիմ ես քեզ անձնուէր ,
 Գուրգուրանօք իմ հողւոյս՝
 Փարիմ ի քեզ , ո՛վ իմ սէր :
90. — Լաւ է ըզքեզ , ո՛վ սիրտ , հիմանց խորտակել՝
 Քան թէ սիրոյ սուրբ ըզգացմանց զքեզ փակել .
 Ինչ որ ուսոյց փորձ կենաց իմ և հասակ՝
 Ձը կայ բան մը սիրոյ նըման անուշակ :
91. — Առաջին օրն՝ որ զքեզ տեսայ ,
 Ա՛հ , քու սիրովք ես վառեցայ .
 Թէ չը հասնիմ նըպատակիս՝
 Թըշուառ կ'ըլլամ ես յաշխարհիս :
92. — Երեսըդ լո՛յս
 Տեսնեմ , ո՛ կոյս ,
 Ո՛վ իմ կենաց
 Սէր , փառք և յոյս :
93. — Հեռի ՚իբէն , ո՛վ իմ սըրտիս սէր վըսեմ ,
 Օրեր տըխուր ու սեւ ժամեր կ'անցընեմ .
 Արցունք , հառաչք են ինձ ընկեր միմիայն ,
 Եւ դու , հեռուստ , հառաչանացս չը տաս ձայն :
94. — Թըռա՛ւ , չընա՛ց գարունս կենաց ,
 Փախան ինձմէ՛ յոյս , սէր անդարձ ,
 Թառամեցայ վարդէ՛ նման՝
 Դեռ , կեանքն ինչ է , չը հասկըցամ :

95. — Ո՛վ դուք հողեր , սնւ հողեր՝
 Որ սիրելիս էք գըրկեր ,
 Առէք և զիս ի ձեր ծոց՝
 Չ'ուզեմ ապրիլ անընկեր :
96. — Կ'ըսես թէ ինձ ես հաւնած ,
 Եւ սուրբ ուխտ մի ես ըրած .
 Համբերութիւնս ալ հատաւ ,
 Դեռ ըսպասե՛մ , ո՛վ Աստուած :
97. — Անողորմ է ժամանակ՝
 Խամբէ շուշան , վարդ , մեխակ .
 Բայց խամբել չէ՛ , չէ՛ կարող
 Սէրըս , սըրտիս յիշատակ :
98. — Ըսի ես սրտիս , ո՛հ , իմ խեղճ սրտիս ,
 Ի՞նչու դու այդպէս կը հալիս , մաշիս .
 -Ըսաւ նա ինձի . կորուսի իմ սէր ,
 Տատրակըն չը լա՞ր ըզկորուստ իւր քեռ :
99. — Գրիչը ձեռքըս առի ,
 Գողտրիկ զիւ մը գըրեցի .
 Ո՛վ սիրելիս , մի՛ մերժեր ,
 Կեանքըս քեզ նուիրեցի :
100. — Վարդի թերթի մը վրայ գրեցի ես մի օր .
 «Կ'երգնում չը սիրել երբէք կենացս մէջ բոլոր .»
 Այն ինչ ձեռքըս գրեց այս ուխտն իմ սրտին ,
 Երգումն ու վարդ թռա՛ն շնչովն զեփիւռին :
101. — Գա՛րուն լինէր բոլոր տարին ,
 Եւ տայնն ինձ իմ սիրելին ,
 Ծաղկեալ դաշտաց , մարգայ վերեւ՝
 Շըջէինք , ո՛հ , մենք թեւ ի թեւ :


102. — Ո՛վ քաղցր բնադդում , քրմահաճ փափաք՝
Երազ ոսկեղէն , ցանկութիւն անյազ՝
Որ զիս մեւցընես և կ'ապրեցնես ,
Ըսէ՛ ինձ , սէր չես , հապա դու ի՞նչ ես :
103. — Ա՛հ , չէ՛ երբէք , չ'եմ հաւատար խօսքերուդ ,
Բա՛ւ զիս խաբես , բա՛ւ խօսեցար դու ինձ սուտ .
Թէ կը վաւիս դու իմ սիրովս բոցակէզ՝
Ինչո՞ւ ուրեմն քեզ կենակից զիս չ'ընես :
104. — Գացի շուկան , տեսայ ապրանք բիւ՛ր , հազար ,
Եւ այցելուք ի բիւր ճաշակ անհամար .
Կ'ըսես . — Չ'եմ'ես ճոխ , գեղեցիկ . — մի՛ վախնար ,
Ամեն ապրանք գըտնէ գնող մ'անպատճառ :
105. — Ծաղկի նըման դու փողփողած՝
Բիւր ձիւքերով եց զարդարուած .
Աչքըս տեսաւ , սիրտըս սիրեց ,
Յանցանք է այս , ո՛վ իմ Աստուած :
106. — Զեփիւռին շունչն՝ ճակատիդ՝
Վարդից բուրմունք՝ երեսիդ ,
Եւ սիրելոյդ առընթեր ,
Յաջողութի՛ւն քեզ ընկեր :
107. — Ո՛վ հողույս հատոր , սէր իմ պաշտելի ,
Գի՛տցիր որ չկայ մէկն յայսմ աշխարհի՝
Որ զքեզ սիրէ ա՛յնքան , որչա՛փ ես ,
Գու միայն սրտիս տէրն ու բաղձանքն ես :
108. — Ո՛հ , հիւանդ եմ , հիւանդ հողուով ես տըկար ,
Հողիս ծով մ'է յոյժ ալեծուփ , հողմալար .
Ո՛վ Տէր , հողույս փոթորիկըն դու անցուր ,
Խաղաղութեան նաւահանգիստն մերձեցուր :

109. — Կը սի՛րեմ հողին , գե՛ղեցիկ հողին՝
Ինչ որ ալ լինի իւր ձեւն արտաքին .
Գեղեցիկ տըգեղ աչքիս չը զարնիր ,
Ինձ հողույ գեղն է ամեն բանէ վեր :
110. — Ծընայ յաշխարհ՝ որբ , անպաշտպան ,
Մեծցայ անմեղ իբրև շուշան ,
Բացի աչքըս , տեսայ ըզքեզ՝
Ի՞նչպէս առանց քեզ ապրիմ ես :
111. — Է՞ր , դու հողի , երբեմն յանկարծ կը տխրիս
Ի՛նչ է պատճառն՝ որ դու իսկոյն կը բերկրիս ,
Հարցո՛ւց միտքըս օր մը հողույս ընդունայն .
— Ինչո՞ւ համար , մի՛ հարցունեք ինձ դու զայն ,
Հողին ունի իւր պատճառներն ու գողտնիք ,
Ի զո՛ւր , ո՛վ բան , միտք , գիտութիւն կը յոգնիք :
112. — Իջայ պարտէզ ընտրել մի վարդ ,
Զայն իմ սրտիս , ո՛հ , ընիլ զարդ .
Այսպէս ահա ըզքեզ կ'ընտրեն
Բիւր գեղեցիկ ծաղկանց մէջէն :
113. — Կ'ուզեմ լինիլ ես մեծատուն՝
Օգնել թըշուառ աղքատներուն . —
Կ'ուզեմ լինիլ ես բարերար՝
Եւ մարդկութեան իսկ օգտակար . —
Կ'ուզեմ լինիլ ես մի գիտուն՝
Քնութեան գաղտնեաց լինիլ ներհուն . —
Եւ Օրինաց մեծ Օրէնքին՝
Որ հողին է տիեզերքին՝
Մօտն հասնելով՝ ծունրը դնիլ՝
Եւ ապագան պայծառ տեսնել :

114. — Զեփիւռ , երբ տեմնես առարկան սիրոյս՝
 Ըսէ՛ նրմա թէ հառաչեմ անյոյս .
 Բայց մի՛ , զեփիւռքս , խնդրեմ մի՛ ըսեր՝
 Որո՞ւ համար են իմ հառաջանքներ :
 — Վըտա՛կ հեղասահ , թէ դու զայն տեմնես ,
 Ըսէ՛ իրեն թէ արցունք կազմեն քեզ .
 Բայց մի՛ ըսեր թէ իմ արտասուքս են՝
 Որ քո սրտառուէ խոխոջըդ կազմեն :
115. — Հողիս երազուն յերկինս անդ թռչէր ,
 Յանկարծ ճառագայթ աչացդ շողողէր .
 Դողդոջեց թեւըն , չը կարաց թռչիլ՝
 Եւ ա՛հա իջաւ ոտիցդ տակ հանգչիլ :
116. — Ա՛հ , պանդուխտ եմ , ինձ գըթացէ՛ք ,
 Սէրըս , կեանքըս՝ ինձ դարձուցէ՛ք ,
 Եւ դո՛ւ , ո՛վ նաւ , զիս փոխադրէ՛ ,
 Հո՛ն ուր սէրըս ինձ կ'սպասէ :
117. — Ո՛չ փառք կ'ուզեմ , և ոչ պատիւ , ո՛չ համբաւ ,
 Եւ ոչ իսկ գանձ , հարստութիւն մեծ , անբաւ .
 Սիրտ մը խընդրեմ գորովալի , ազնիւ , վե՛հ՝
 Պաշտեմ ըզնա՝ և պաշտուիմ ի նմանէ :
118. — Բնո՛ւթիւն , ինձ սէր մի՛ քարոզեր ,
 Պո՛ւէտ , զսէր ինձ մի՛ երգեր .
 Սո՛ւրբ յիշատակք մըտերմութեան՝
 Զձեզ նախընտրեմ քան զամենայն :
119. — Որդեա՛կ , կ'ո՞ւզես լինիլ դու մեծ . երեւելի ,
 Եւ մարդկութեան ընել նուէր մը սխրալի .
 — Հաւատա ինձ , չը կայ նուէր վե՛հ այնքան՝
 Քան տալ նրմա որդիք ազնիւ , պատուական :

120. — Գեղեցկութիւն է խաբուսիկ՝
 Վարդ այտից գոյն է վաղանցիկ .
 Այլ հոգւոյ գեղն է տեւական ,
 Զարդ և պըսակ անմահական :
121. — Ի՞նչ կուզես դեռ , ո՞վ մահացու , անդադար
 Միշտ բնորձանքներ , միշտ փնփաքներ անհամար՝
 Եւ երբ զանոնք լընուս՝ դարձեալ դու կուզես
 Նոր , նոր բաներ՝ ըղձիւք միշտ վառ , բոցակէղ .
 — Հողիդ ճարակ , չէ՛ , չը գտներ յայս երկիր ,
 Կրարէ թեւերն ըղձիցըդ քո բարձրաթիւ
 Ունայնութիւն , ամենայն ինչ ընդհնայն՝
 Պարտուց լըրումն մեծն ի հաճոյս է միայն :





19511
19512
19513
19514
19515
19516
19517

2013
2013



